առջնորդ եղաւ մեզ մեր ամեն քայլերուն մէջ. դժբաղդարար այն անձը՝ զոր մեր կէտ միութեան զրոյս էինք, միութեան գործին մէջ հակասակ շարժեցաւ և մեր յուսոյն չպատասխանեց : Ժամանակիս զէպրերն այնպէս բերին և ցոյց տալին մեզ թէ նոյն խակ այն անձը մեր բոլոր անխաղաղութեանց անորժան մէկն էր : Ի՞նչ ըրինք մենք այս ժողովին մէջ՝ երբ վաւերացանք նոյն անձին ընտրութիւնը, ամենուս սրտին մէջ միայնակ փափար մը կար. միօրինակ եռանդ մը զմեզ ամենա կրկէր դէպ ՚ի միութիւն այնպէս որ մասնաւոր ձեւակաւութեանց կարևորութիւն տալն անպատշաճութիւն և թեթեւ իմն կերելէր մեզ : Սակայն փորձը ցուցուց որ մեր Վեհափառ Հայրապետը բան զմեզ հետատես գտնուելով, ճանչցաւ թէ այն անձը՝ զոր մեր եռանդեան մէջ կէտ նպատակի դրած էինք, չը պիտի կրնար պատասխանել մեր փափարանոց : Թէպէտ և իմ կամքէս հետի է անձնականութեան հոյիլ, սակայն երբ Սոյ խնդիրը կուգայ՝ կատարելով անուշովը յիշել զՄկրտիչ կաթուղիկոս : Ես ինքն որ բուէ տալի ամենուր հետ մէկտեղ, ևս որ իրեւ կաթուղիկոս Էջմիածնի ուխտեալ էի, ամենուր հետ համագրած էի թէ մեր բուէն ուրիշ բանի համար չէր, բայց եթէ Ազգին և Եկեղեցւոյն միութեան համար : Բայց ի՞նչ միութիւն էր՝ որոյ մեր կը փափարէինք. միութիւն այն առաջարկութիւնը զորս Մկրտիչ Սրբազան ներկայացուցած է մեզ, միութեան նըպատակ ունէլին. ինք զգացած էր թէ մեր որոշումն ի՞նչ և մեր փափարած միութիւնն ի՞նչ են : Երբ ինք Սոյ թեմերուն ընդարձակուիլը կը պահանջէր, զգացած էր թէ ի՞նչ է սոյն պահանջումն. երբ ինք աթոսին տեղափոխութիւնը կառաջարկէր, զգացած էր թէ անցեալի մը տըխտը յիշատակը պահանջել պարտաւոր է, ուր այնքան անցքեր տեղի ունեցած են. և վերջապէս երբ կրօնարհէր նա մինչև անդամ ամսական պահանջելու տէրութեանն, պահանջում մը զոր ևս նուաստութիւն կը համարիմ իմ մասին իրր եկեղեցական. ի՞նչ կըսէր՝ եկեղեցականի մը օտարին ամսական պահանջելու չափ նուաստանելով Խառն ժողովը և տեսնելով որ իւր ստիչ

այնպիսի հրաժարական մը կայ, զոր եթէ չընդունի՝ խղճմտանքը զինք պիտի դատապարտէ, ընդունեց զայն. և ասիկա իւր պարտքն էր ընել. ո՞չ ապաքէն դուք իսկ որոշեցիք՝ որ իբր թեմական խնդիր վարչութիւնն ստանձնէ. ուրեմն ի՞նչ կը մնար ընել վարչութեան, եթէ ոչ զիտեւ ժամանակիս ոգին, նաև այն անձին ուզին, թէ արդեօք միութեան փախարօ՞ղ է, և ըստ այնմ առնել ինչ որ արժանն էր: Լսել միանգամայն ուշի ուշով Վեհափառ Հայրապետի հրամանը: Անշուշտ չէ մոռցուած թէ Վեհափառ Հայրապետն ո՞րպիսի կոնդակներ յղած էր մեզ Սոյ խնդրոյն յուզուած ժամանակ. այդ կոնդակաց իմաստն ամենուս ծանօթ լինելով՝ հարկ չեմ տեսներ նորոգել: Իսկ երբ Ազգ. մարտի խնդրոյն մէջ մտանք, կարծես թէ Վեհափառին կոնդակը բարեփոխութիւն մը ստացաւ: Վեհափառն այս անգամ բացայայտ կերպիւ իմացուցած է Սրբազան Պատրիարք Հօր որ թէ և ցաւալի անցք մ'է 3 կաթուղիկուութիւն մէկէն ունենալ, բայց ժամանակը, քաղաքականութիւնն ու այլևայլ խորհրդածութիւնք հարկ դրած են ընդհանրական կաթուղիկուութեանն զատ միւսներն ալ ընդունիլ պիտակ անուամբ:

Արդ, ըստ որում Ազգ. մարտի խնդրոյն հետ բնականաբար հարկ էր Սոյ խնդիրն ալ լուծել, և ըստ որում Սոյ կաթուղիկուան հրաժարական կուտայ այնպիսի առաջարկութիւններ մէջ բերելով՝ որոց մէկն ալ ընդունելի չէ, ուրեմն ի՞նչպէս կարելի էր Վարչութեան՝ այլ ևս տատամսիլ այդ հրաժարականին վրայ և չընդունիլ. անկարելի էր Վարչութեան այսպէս չընել վասն զի Մկրտիչ Արքայան բացարձակապէս հրաժարեալ կնկատէր զինքն, իւր գրութիւններն որ կհաստատեն զայս, կեցած են Վարչութեան զիւանին մէջ: Մ. Լ. ուրիշ միջոց չկար. հարկ էր կամ հրաժարականն ընդունիլ և կամ բանակցութեան մտնել նորա հետ. բայց Վարչութիւնը մտածեց որ այնպիսի անձի մը հետ բանակցութեան մտնել՝ անօգուտ էր և աւերաբ. ժամանակին անձկութիւնը, խնդրոյն ստիպողականութիւնը և Սոյ թեմերուն խղճալի կացութիւնը պարտք դրին Վարչութեան վրայ փութացնել այն ցաւալի իրաց վախճանը՝ կաթուղիկուան հրաժարականն ընդունելով: Վարչութիւնը համարած է որ այդ հրաժարականն ընդունուելով միայն կրնայ ձեռք բերուիլ Սոյ աթոռն և աւերաբ լինիլ Սոյ աթոռն և խոհուն դատողութեամբ որոշել իւր ընելիքը:

Հուսկ ուրեմն՝ Տեախք երեսփոխանք, զոր որ արդէն այս խնդիրն իբրև գաւառական խնդիր յանձնած է իւր Վարչութեան, պէտք է թողուք և յանձնէք դարձեալ Վարչութեան, որպէս զի ընդ նախադաշութեամբ Ա. մեծ. Սրբազան Պատրիարք Հօր լուրջ դատողութեան տակ առնու նոյն խնդիրն և փութով զայն վերջացնէ ի փառս և յօգուտ Եկեղեցոյ և Ազգիս (Հաւանութեան ձայներ):

ԱՅՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մէկ կողմէն Սրբազան Պատրիարք Հայրը Մկրտիչ կաթուղիկուան հրաժարման առթիւ Վարչութեան ըրած որոշման վրայ ժողովոյս կարծիքը կուզէ, միւս կողմէ մեր յանձնաժողովը զիտողութիւն մը կ'ընէ ըսելով թէ Վարչութիւնը պարտաւոր էր Մկրտիչ կաթուղիկուան ծանուցանել իւր առաջարկութեան ընդունելութիւնն զտած չըլլալը և չէ ըրեր. մեզ հարկ է նաև զիտուել թէ Վարչութեան այն սրահատութիւնը վճռել և ուղղելու համար տնօրէնութիւն մը ընել ուղեներն է, Վարչութիւնը միթէ մեզ վարչական տազնապ պիտի յարուցանէ՞: Ա. մի սահմանադրական սրահատականութիւն մըն է որ ժողովը չկրնար զանց առնել, եթէ Սահմանադրութիւնը չուզէր քաղաքավարութեան հետ շփուել: Վարչական տազնապ պիտի յառաջ գա՞յ, պէտք է հասկցուի. ուստի պարզուպէս և յառաջ քան զամենայն, կը հարցնեմ Վարչութեան թէ արդեօք տազնապ պիտի յարուցանէ՞ մեզ, այն խնդրոյն առթիւ:

ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Դարաթ մը միջոց տալու է որ պատասխանէ Վարչութիւնը: ԱՅՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թողէ՛ք որ այժմէն պատասխանէ, եթէ կուզէ: Կը հարցնեմ խոհուն սրբազանին՝ կուզէ՞ արդեօք պատասխանել յանուն Վարչութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ի՞նչպէս կրնայ

յանուն Վարչութեան այդպիսի հարցման պատասխանել:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ. — Ի՞նչ ըսել է վարչական տազնապ, մեկնեցէ՛ք:

ԱՅՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լաւ ուրեմն. եթէ այսպէս է, աւերաբ նախանձախնդրութիւն է մեր ըրածը, անցնինք խնդրոյն քննութեանը:

Խօսքը Աղաբէկեան է՞ Ֆէնտիին է:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՑ. — Սոյ կաթուղիկուութեան կարևորութեանը վրայ խօսելու համար չէ որ բեմն ելայ, ոչ ալ նոյն աթոռին վրայ նստող Մկրտիչ կաթուղիկուան ըրածները քննադատելու համար. միայն Աղաբէկեան ժողովին կողմէ Սրբազան Պատրիարք Հօր հարցմանց պատասխանները պատրաստելու և հոս բերելու համար կարգեալ Յանձնաժողովին յանձնուած պաշտօնը պիտի բացատրեմ: Վարչութիւնն Աղաբէկեան ժողովին իրեն յանձնուած մէկ գործն, այն է Սոյ խնդիրն, իրաւամբ քններ և որոշեր է. այն որոշումը որո՞՞ւմ գործարեւէ առաջ Ս. Պատրիարքն Աղաբէկեան ժողովին զիմած է. յանձնաժողովը չառաջարկէր որ Աղաբ. ժողովը միջամտէ Վարչութեան գործին, այլ միայն ձեռնարկ պահատութիւն մը կը նշմարէ և կիմացնէ ձեռք չուզէր նաև որ այս պարագան տազնապ յարուցանէ Վարչութեան մէջ: Իսկ ձեռն պահատութիւն ըսածնիս սա՞ է որ երբ պատճառարան կալ հրաժարական մը կուզայ, որո՞ւ կողմէ ալ ըլլայ, ընդունուելէ առաջ պէտք է անգամ մը հարցնել. այս սրահատը իրացնելու առաջարկութիւն մ'է յանձնաժողովին ըրածը. եթէ ժողովը չընդունի, յանձնաժողովը չպիտի ըլլայ, և կառավարիչ խնդիրը նորէն յղել Վարչութեան:

Դանք որ ինչ առաջ բեմն ելնող երեսփոխան Սրբազանը՝ Մկրտիչ կաթուղիկուան առաջարկութիւնները թուելու առնել 3 ը միայն յիշեց, բայց չորրորդն ինչո՞ւ չյիշեց. կարծեմ չորրորդը՝ տէրութեան կողմէ մէ՞հտիէ պատուունչան ստանալու խնդրոյն կը վերաբերի, զոր իւր նախորդն ունի եղեր. . .

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — (Բնդմիջմամբ) Մէ՛հտիցէ պատուունչան չէ, ամսականի խնդիր է, զոր Խորէն Սրբազան յիշեց:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՑ. — (Ժարուակերով) Դ՛նտ աղէկ. բայց այդ ամսականի խնդիրը յիշելու առթիւ տէրութիւնն օտար անուանեց խոհուն սրբազան տէրութիւնն օտար չէ, մերն է, և այն բարեխնամ տէրութիւնն է, որ մեր նախկին Պատրիարք Տ. Պողոս սրբազանին և առաջ ալ Տ. Սարգիս Սրբազանին ամսական կապած էր, երբ անոնք պատրիարքութենէ հրաժարած էին. ասիկայ ոչ որ չուրանար:

Գաթով՝ Մկրտիչ կաթուղիկուան ընտրութեան մասին անխորձ գտնուելուն, միևնոյն բանն է հրաժարած առնել անխորձ կարծուիլը. ինչպէս Մատթէոս վարդապետ յիշեցուց, Մկրտիչ կաթուղիկուան կրնայ ըսել թէ կընդունիմ և նորէն կը շարունակեմ իմ պաշտօնս. ձեր ընտրած յանձնաժողովը այս բոլորէսն ուղեց հասկցնել. թէ որ ինք կը պնդէ հրաժարականին վրայ, անմիջապէս պէտք եղածը կը տնօրինուի Վարչութեան կողմէ. թերևս չպիտի կուզէ մնալ իւր աթոռին վրայ: Յանձնաժողովը այս առաջարկութիւնն ընելու առթիւ վարչական տազնապ յարուցանելու միտք չունի. արդէն անխաբ կաթուղիկուան մը կայ, որ է Արևիկայ, յոս սրբազանը. մէկ աթոռին վրայ մի քանի կաթուղիկուան երևնալն ազգին քաղաքականութեանն ալ յարմար չգար, կարծեմ թէ և ոչ մէկ Հայ մը չկրնար ուղել որ մէկ աթոռի մը կաթուղիկուան երկու տարին անգամ մը փոխուի:

Վերջապէս՝ ձեր յանձնաժողովը չպիտի իւր առաջարկութեան վրայ, չուզէր վարչական տազնապներու առիթ տալ. այլ միայն սա՞ հասկրցնել կուզէ որ չըսուի թէ այս աթոռներուն վրայ նստող կաթուղիկուաններն այսպէս տարին մէջ մը անարգանօք վար կառնուին: Այս է աւասիկ յանձնաժողովին բուն նպատակը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Աղաբէկեան է՞ Ֆէնտիին Մկրտիչ կաթուղիկուան ամսականի խնդրոյն վրայ սխալ զիտողութիւն մը ըրաւ, զոր հարկ կհամարիմ ուղղել: Խնդիրն այն չէ որ տէրութիւնը պաշտօնէ հրաժարեալ այս կամ այն եկեղեցականին ամսական կկուպէ. այլ թէ՛ պաշտօնի վրայ եղող եկեղեցական մը պայման կընէ տէրութեան կողմէն իրեն ամսական մը կուպէլ:

այս բանը չկրնար ընդունուիլ . Ազգը պէտք է որ իր արշտոնեաներն սալրեցնէ . կարծեմ թէ Խորէն Սրբազանի զիտադութեան առնուլ ուզած կէտն այս էր :

Գանք ուրիշ կէտի մը : Ազարէկեան էֆէն տի Սոյ խնդրոյն առթիւ յանձնաժողովոյ կատարած պաշտօնը բացատրեց և ըսաւ թէ վարչութեան որոշմանը մէջ տեղի ունեցած ձեռնարկատեղեան մը համար միայն հոս եկած է խնդիրը :

ԱՂԱՔԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Այո, ձեռնարկատեղեան է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իրաւունք ունիմ միևնոյն յանձնաժողովին հարցնել թէ քանի որ ուրիշ առաջարկութեանց վերաբերեալ տեղեկագրով մը ըսած են որ Պատրիարքն այն ատեն կրնայ հոս բերել խնդիր մը՝ երբ Սահմանադրութեան հակառակ գտնէ, միթէ ձեռնարկատեղեանը բաւական է խնդիր մը հոս բերելու : Տարակոյս չկայ որ եթէ այսպիսի պատճառներով Սրբազան Պատրիարքն ամեն խնդիր հոս բերելու ըլլայ, ասոնց վերջը շտնուիր : Պատճառաբանութեամբ հրաժարողի մը պատճառները քննուելն կարելի է որ քննութեան արդիւնքը պէտք է հարգուի հրաժարողին . այս մասը Ս. Պատրիարքին հարցմանը կատարաստեմք քննիչ յանձնաժողովը : Սակայն Մկրտիչ կաթողիկոսի հրաժարականին պատճառարանութիւններն այդ ձևին կրնան տեղի տալ . Եկեղեցւոյ և Ազգին դարաւոր աւանդութեանց և սովորութեանց հակառակ պահանջում ունեցող և երեք տարիներէ ի վեր անընդհատ և անփոփոխ իր պահանջմանց վրայ պնդող թեմական կաթողիկոսի մը հետ ազգն ու ազգային վարչութիւնն ինչպէս պէտք է վարուիլ . այդ տեսակի վնասակար խորհուրդներ ունեցողը ոչ թէ կաթողիկոս մը այլ հոտարակ կարգի անձ մ'անգամ ըլլար, վայրկեան մը իր արշտոնին վրայ թողուլ ներելի էր : Ի հարկէ Վարչութիւնն այս և ասոնց նման խորհուրդներով Սոյ կաթողիկոսին հրաժարականն ընդունելի դատած է : Իսկ եթէ ըսուի որ թերևս Մկրտիչ կաթողիկոս ետ կենայ իր ազգամիտ առաջարկութիւններէն, ուստի պէտք է անսպարեւ անոր հրաժարականն

ընդունել . կը պատասխանեմ թէ ասոր ալ դարմանն արդէն կայ . այդ խնդրոյն մէջ զրկեալը ոչ թէ Սրբազան Պատրիարքն, այլ Մկրտիչ կաթողիկոսն պիտի ըլլայ . ո՞վ ըսաւ թէ վարչութեան որոշման մը երեսնէն զրկուողին համար Ազգային ժողովիս դռները դոյն են : Մկրտիչ կաթողիկոս ինքն ուղղակի կրնայ հոս ղիտել և վարչութեան որոշման դէմ բողոքել : Զրկուող մը ոչ թէ կաթողիկոս այլ ազգին յետին մէկ արշտոնեացն անգամ ըլլայ, կրնայ հոս ղիտել խնդրագրով մը : Սրբազան Պատրիարքը կհարցնէ թէ ազգային ժողովն արդեօր Մկրտիչ կաթողիկոսի առաջարկութիւններն անդամնալի կերպիւ մերժած է : Այս հարցման պատասխանը նոյն խի Ազգային ժողովոյ ըրած բուհարկութեան ձևին մէջն է . Ազգային ժողովն փոխանակ Մկրտիչ կաթողիկոսի առաջարկութիւնները մի առ մի հերքելու, անոնց վրայ վնասարանել կարելի է որ հարցմանը մէջ ինչ առաջարկութիւն որ հակառակ է եկեղեցւոյ և ազգին շահերուն և Սահմանադրութեան տրամադրութեանց, երբէք չկրնար ընդունիլ . հետևաբար Մկրտիչ կաթողիկոսի առաջարկութիւններն ալ բովանդակապէս մերժած կըլլայ : Այս բացատրութիւնն ահա կրնայ տրուիլ Ազգաբան Պատրիարք Հօր հարցման, և որ և է տնօրէնութիւն թողուլ վարչութեան . ինչպէս արդէն Սոյ կաթողիկոսական խնդիրն իրբեմնութեան խնդիր վարչութեան պատկանելի ըլլալն որոշուած է :

Սրբ' իմ զիտադութիւններս ամբողջով կեղտակայնեմ թէ, պէտք է յայտարարել Ազգաբան Պատրիարք Հօր հարցման թէ ազգային ժողովն Սոյ Մկրտիչ կաթողիկոսին առաջարկութիւններն մերժած է, և խնդիրը յիշէ դարձեալ վարչութեան, որպէս զի իր արժան դատած եղանակաւ տնօրինէ : Սոյ կաթողիկոսին հրաժարականն ընդունելով՝ նոր կաթողիկոսի ընտրութեան պէտք չծագիր . վարչութիւնը կրնայ տեղադրուի մը դնել ցմահ նորա : Ետ ամօթալի բան պիտի ըլլայ եթէ Սոյ խնդիրը դարձեալ ժողովոյ Օրակարգն անցնելով մեզ գրադեցնէ . մինչդեռ հաղի ազատած ենք անկէ : Չգիտեմ թէ այս տեսակ խնդիրներով ժողովս

գրադեցնել ինչպէս կուզուի, մինչդեռ ուրիշ առիթներու մէջ կը փախարին որ ժողովս դատարարութեան և ուրիշ կարևոր խնդիրներով զրադի : Բաւ է որչափ ժամանակ որ ամբողջին խնդիրներով կորուսինք . Մկրտիչ կաթողիկոս իր նախորդաց ունեցած իրաւասութեան սահմանին մէջ ալ իր պաշտօնը վարել չուզէր . անոր խնդիրներուն և անձին կապուելով ժողովըրդեան խնդիրները մտայնք . Սոյ թեմերն վերջին աստիճան խեղճութեան մէջ կը լսենք, և բողոքականութիւնն ու պատկանութիւնը հետ գհետէ կը ձարակի այն կողմերը . ուստի զգուշանանք նորէն ամբողջին խնդիր յարուցանելէ, և յանձնենք վարչութեան որ կաթողիկոսի ժողովըրդեան վնասները դարմանելու միջոցներ խորհի գործադրէ :

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՋ. — Փախաղեան էֆէնտին կըսէ թէ ժողովը բացորոշապէս մերժած է Մկրտիչ Սրբազանին և առաջարկութիւնները . բայց ես կարգացի արձանագրութիւնը և տեսայ որ ժողովը բացորոշապէս ըսած չէ մերժած ըլլալը . իսկ Վարչութիւնը՝ Ազգային ժողովոյ կողմէն մերժուած են առաջարկութիւններն ըսելով՝ ընդունեց Մկրտիչ Ազգաբանին հրաժարականը :

Այլ ես կը զարմանամ որ Սոյ խնդիրն իր անկարևոր իւր վրայէն նետել ուզող ժողովը՝ նոյն խի Մուրատեան վարժարանի խնդիրն ալ իրբեմն դատարարութեան վերաբերեալ կարևոր խնդիր մը չուզէց նկատուիլեան առնուլ :

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ. — Սրբազանին խօսքերը ծանր են, բայց մեք գիտենք իր սիրտը և կղզանք թէ ինչ ոգևոլ կիտուի : Այսու ամենայնիւ պէտք է ըսեմ թէ մեք ալ ուրիշ ոգևոլ չենք վարուիր իւր Սրբազանութեան հետ, բայց միայն Սահմանադրութեան այն ոգևոլ՝ որ կուարտաւորէ զմեզ խրաբանչիւր խնդիր իրեն վերաբերեալ արշտոնէութեան յանձնել :

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՋ. — Ամեն բանէ աւելի մէկ բանի մը համար շնորհակալ եմ, որ քաղաքագիտութեան ըստ դատ մը կուտար մեզի, խնդիրները ձեր վրայէն նետելով :

S. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԵ. — Ս. Պատրիարք Հօր Սոյ խնդրոյն առթիւ Ազգ. ժողովոյս մատուցած հարցումն, ինչպէս երեսփոխան մը ըսաւ, չէ թէ իրբեմն Սոյ կաթողիկոսական խնդիր ներկայացուցած է հոս Ն. Սրբազանութիւնը այլ ստի իւր և Վարչութեան մէջ անհամաձայնութիւն պատճառ ըլլալու ձևով բերած է . վասն զի Ն. Սրբազանութիւնը կըսէ . Ազգ. ժողովը Մկրտիչ կաթողիկոսին առաջարկութիւնները մերժած է եղեր, և Վարչութիւնն ասոր վրայ կրթնելով անոր հրաժարականը կընդունի . կը հարցնէ թէ իրաւ այդպէս է մի : Կրնայ ըլլալ որ Մկրտիչ կաթողիկոս իւր առաջարկութիւններն ընդունել տալու համար հրաժարականն իր սպառնալիք մէջ բերած լինի, և երբ տեսնէ թէ իւր առաջարկութիւնները չեն ընդունուիր և կը մերժուին՝ ինք ալ յետոյ կը կոչէ զանոնք : Հասանական կէտ մ'է այս : Երեսփոխան Տեալք, Սոյ կաթողիկոսական խնդիր չէ այս, այլ սահմանադրական սկզբան մը խնդիր այն է պատճառարանեալ հրաժարականի մը պատճառներն երբ չեն ընդունուիր որ և է ժողովէ մը՝ հրաժարողին իմաց կը տրուի իւր մէջ բերած պատճառներուն հետեւապէս և հրաժարականին չընդունուիլը եթէ վերջապէս պնդէ իւր պատճառներուն վրայ՝ յայնժամ և այն հրաժարականը կընդունուի . այսպէս շատ անգամ պատճառարանեալ հրաժարականներ եկած են հոս և չեն ընդունուած և ըստ սահմանադրական սկզբան՝ հրաժարողին ծանուցուած : Մեք ձգենք Մկրտիչ կաթողիկոսին անձը, ձգենք նորա իմաստ եկեղեցւոյ և ազգին ունեցած արարքը և միայն օրինական խնդիրը ձեռք առնենք . տարակոյս չունիմ որ Ս. Պատրիարք Հօր հարցման բուն նպատակն այս է, այսինքն թէ հարցնել պէ՞տք է հրաժարելոյն թէ ոչ . Չեր յանձնուիմ մըն այդ կը պատասխանէ այս հարցման, բայց Մկրտիչ կաթողիկոս եկեղեցւոյ և ազգին նկատմամբ վնասակար ընթացից մէջ կը գտնուի . այս մասին կը պատասխանեմ : Մեք գիտենք և վարչութիւնը ձեռնհաս կը ձանջանաք յուղղութիւն նոյնն՝ որք կարօտ են ուղղութեան, արդ երբ Մկրտիչ կաթողիկոս եկեղեցւոյ և ազգին դէմ վնասակար կերպով կը

վարուի, Վարչութիւնը կարող է և պէտք է կոչել զայն յազգութիւն, և մինչև իսկ եթէ յանդիման անասաւել եկեղեցական օրինաց և մեղանշէ եկեղեցւոյ աւանդութեանց դէմ՝ պէտք է եկեղեցական վճռով դատաւարանը տայ ձեռքնհաս իշխանութեան: Ահա այսպէս օրինական խնդիր հասկցած է Չեր յանձնաժողովը Ս. Պատրիարք Հօր հարցումը, ինչպէս որ անանկ ալ է, և ոչ թէ Սոյ կաթողիկոսական խընդիր. վասն զի Աղգ. Ժողովը այդ խնդիրն իրրե թեմական խնդիր իւր ամբողջութեամբը միանգամ ընդ միշտ յանձնած է Վարչութեան՝ ի տնօրէնութիւն:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Աղգ. վարչութիւնը Մկրտիչ կաթողիկոսին հրատարական ընդունելու որոշմանը հիմ բռնած է անոր առաջարկութեանց Աղգ. Ժողովէր մերժուիլը. ինծի համար զեռ մութ է մերժուիլը կամ չը մերժուիլը. իմ հարցումս սրարդպէս այդ կէտին համար է. Աղգ. Ժողովը այն մարզուն առաջարկութիւնները մերժած է թէ ոչ, տակաւին Ատենապետ փառայի բերնէն չեղաւ խօսք մը որ այն առաջարկութեանց Աղգ. Ժողովով մերժուած ըլլալն յայտնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես կրկին ըսեմ ձեզի՛ Սրբազան Հայր, յանուն ժողովոյ, և աստե նագրութիւնն ինձ վկայ. մեր Մկրտիչ կաթողիկոսին առաջարկութիւնները մի առ մի չքննեցինք որ կարենայինք ընդունիլ կամ մերժել. ստոյգ է որ շատ բաներ խօսուեցան հոս. աղէկ կ'ըլլեմ որ ըսուեցաւ նաև թէ նախորդ կաթողիկոսը Մէհտիէ նշան ունէր, ասոր ինչո՞ւ չըարուեցաւ. . .

ՓԱՓԱԶԵՆ Ս. ԷՖ. — Իրիթ օղէն ինկան այն խօսքերն որ քուէի դրուեցան. ի՞նչ սրտաճառաւ ուրեմն այդ քուէարկութիւնը կատարուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկեցէք. մինչև ցոյս վայր քննութեան շնտաւ ժողովը. այս կամ այն սրտմանը կ'մերժեմ չըսաւ. բայց այս վայրկեանէն կրնայ քննութեան մանել. ասոր ըսելիք չունիմ: Ժողովն ինք Վարչութիւն չէր որ քննէր, անոր համար Վարչութեան յանձնեց, չափերը ցուցնելով, և ըսաւ վարչութեան.

զնա՛ այս չափերուն հետ համեմատէ կաթողիկոսին սրտմանները և ըստ այնմ ընդունէ՛ կամ մերժէ՛: Բայց Վարչութիւնը սխալած է այս կէտին մէջ ըսելով թէ Աղգային ժողովէն մերժուած են կաթողիկոսին առաջարկութիւնները. Սրբազան Հայրն ալ կհարցնէ թէ իրաւ մերժուեցա՞ն: Եւ որովհետև այսպիսի հարցման մը առանց քննութեան անարատն էր ժողովոյս պատասխանել, յատուկ յանձնախումբի մը յանձնուեցաւ սրատասխանը սրատաստել. դժբաղդարար յանձնախումբնիս ալ սխալած է կարծելով որ Մկրտիչ կաթողիկոսին առաջարկութիւններն Աղգ. Ժողովէն բացարձակապէս մերժուած են: Այս է ճշմարտութիւնը: Իսկ եթէ ժողովը կուզէ, կրնար այսօր քննութեան առնուլ նոյն առաջարկութիւններն. բայց մինչև ց'այսօր զանոնք ոչ քննած էք, ո՛չ ընդունած և ոչ մերժած:

(Ատենապետի անունով ընդհանուր փառայի խօսքերուն:)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկեցէք, ահա՛ ատենագրութիւնը. մտիկ ըրէ՛ք:

Այս միջոցին Ատենապետ փառան՝ Ժ. նստի ատենագրութիւնը ձեռքն առնելով՝ անոր մէջէն հետեւեալ հատուածները կարդաց. — «Սրբազան Նախագահ. — Ես իրի՛ Պատրիարք և իրրե Նախագահ Աղգ. Վարչութեան գործեալ կ'յայտարարեմ թէ՛ չեմ կըրնար յանձն առնուլ այս խնդրոյն սրատասխանութիւնը:

«ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր, «ի՞նչ կուզէք, հրահանգ կուզէք ժողովէն:

«ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ժողովը պէտք է որոշակի ըսէ՛ Վարչութեան թէ՛ սա՛ կամ «նա՛ կերպով գործէ՛ այս խնդրոյն մէջ. իրրե «ծանր խնդիր հոս պէտք է լուծուի և որոշուի «թէ՛ ի՞նչ կերպով գործադրելու է Վարչութիւնը:

«ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր, «միշտ իրաւունք ունիք իրրե Վարչութեան Պետ «ժողովոյս ղիմել երբ հարկաւոր դատիք. ուստի «երբ այս խնդիրը ժողովոյս կողմէ Վարչու-

«թեան կ'յանձնուի, Վարչութիւնը պէտք է «քննէ և մտածէ թէ՛ ի՞նչ ընելու է. այժմէն «հրահանգ տալու հարկ չկայ, մանաւանդ որ «պէտք է խնդրոյն. միթէ՛ Աղգ. Ժողովը կըրն «ւա՞յ ընել զայս. հնա՞ր է ժողովով Մկրտիչ «կաթողիկոսը յատենի քննութեան ենթարկել կամ անոր վերաբերեալ գրութիւնները՝ «բողոք, դանդատ, և այլն՝ մի առ մի քննել և «որոշում տալ. Վարչութեան գործ է այս. «իսկ երբ Վարչութիւնը դժուարին կէտերնը «կատէ գործադրութեան տակն, այն ատեն «կրնայ սրատասխանեալ տեղեկագրով մը հոս «ղիմել: Մեր գիտենք, Սրբազան Հայր, որ «խմտաութեամբ կ'վարուիք ձեր տնօրէնութեան «մէջ. ինչո՞ւ հիմակուրէն ձեր գործին միջա- «մտենք սա՛ կամ նա՛ կերպը ցուցնելով. թե «բեւս մեր հրահանգին բնաւ չսխալուի կարօտիք: «Ատենապետ փառային ներկայացուցած «քուէի բաւերուն վրայ ղիտողութիւն մը չըլ- «լալով, նոյնութեամբ քուէի դրուեցաւ, և «Նախագահ Սրբազանին ու Մանկասարեան «էֆէնտիին քուէից դէմ ընդհանուր հաւանու- «թեամբ ընդունուեցաւ, և խնդիրն ՈՐՈՇՈՒԵ- ՅԱԻ յղել Վարչութեան»: «Ս. ՄԱՏԹԷՆՈՍ ՎՐԴ. — Առաջինն ալ կարդացէ՛ք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դուք վերջինը նա- յեցէ՛ք, որոշումն այս է: Խօսքը Սրբազան Նախագահին է:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Երբ նոյն օրը քուէարկու- թիւն եղաւ, ևս մինակ հակառակ քուէ տուի, և ըսի թէ Ժողովը պէտք է ինձ հրահանգ տայ սա՛ կամ նա՛ կերպով վարուելու. դուք ինձ եկեղեցական կանոնները և գորերուն մեզ բերած աւանդութիւնները կը յիշեցունէք. մեր այդ աւանդութիւնները մեզէն զիտենք. մեր ե- կեր ենք բացորոշ հրահանգ խնդրելու գործա- դրութեան մէջ երեցած դժուարին կէտերուն համար. ինչո՞ւ կը խուսիք մեզ օգնելէ. այսչափ աշխատութիւն առանց տաղնապի կրեր և հոս բերեր ենք խնդիրը, դուք ինչո՞ւ տաղնապելով կը խօսիք և անկեղծութեամբ չէք երթար. ևս անկեղծութեամբ կը խօսիմ: Ես այն օրն այս-

սխալ խօսքեր լըրի քուէարկութեան միջոցին, չգիտեմ թէ ամբողջ արձանագրուած են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛, Ս. Հայր, ըսիք բոլոր այդ խօսքերը. բայց մանրամասն արձանագրուած չեն, վասն զի մեր սղագրու- թիւն չունինք:

Ս. ՄԱՏԹԷՆՈՍ ՎՐԴ. — Թող տուէք որ ես կարդամ. [Եւ կարդաց Ժ. Ատենագրութեան մէջէն Ատենապետ փառային խօսքն՝ որ արձանագրեալ է ուսկէս.]

«ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Քարուակերպ] Ա. «սով բոլոր այն սրտմաններն որ և է կաթո- «ղիկոսի կողմէն ալ դան, մերժած կըլլայ ժո- «ղովս, և խնդիրը կ'յղէ Վարչութեան՝ ըստ «կարգաց և օրինաց Եկեղեցւոյ և սահմանադ- «րութեան գործադրել»: [Յուզմունք]

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Դարձեալ ձեռքն առնելով Ժ. նստի ատենագրութիւնը կարդաց բարձրաձայն և մեկին, ժողովոյ վճռոյն առթիւ Սրբազան Նախագահին և իւր մէջ եղած խօսակցութիւնն՝ որ արձանագրեալ է սուկէս:

«ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես իրրե Պատ- «րիարք և իրրե Նախագահ Աղգ. Վարչու- «թեան գործեալ կ'յայտարարեմ թէ՛ չեմ կըր- «նար յանձն առնուլ այս խնդրոյն սրատասխա- «նաւութիւնը:

«Ատենապետ փառայ. — Սրբազան Հայր, «ի՞նչ կուզէք, հրահանգ կուզէք ժողովէն:

«Ատենապետ փառայ. — Սրբազան Հայր, «միշտ իրաւունք ունիք իրրե Վարչութեան «Պետ ժողովոյս ղիմել երբ հարկաւոր դատիք. «ուստի երբ այս խնդիրը ժողովոյս կողմէ Վար- «չութեան կ'յանձնուի, Վարչութիւնը պէտք է «քննէ և մտածէ թէ՛ ի՞նչ ընելու է. այժմէն «հրահանգ տալու հարկ չկայ, մանաւանդ որ «հրահանգ տալու համար նախաքննութիւն պէտք «է խնդրոյն. միթէ՛ Աղգ. Ժողովը կրնա՞յ ընել «զայս. հնա՞ր է ժողովով Մկրտիչ կաթողիկո- «սը յատենի քննութեան ենթարկել կամ անոր «վերաբերեալ գրութիւնները՝ բողոք, դանդատ «և այլն՝ միառմի քննել և որոշում տալ. վարչու- «թեան գործ է այս. իսկ երբ Վարչութիւնը «դժուարին կէտեր նկատէ գործադրութեան ա-

« տեն կրնայ սրտաճառարանեալ տեղեկագրով մը
 « հաս զխմել : Մեր զխոսեր , Սրբազան Հայր ,
 « որ խնամաբար կ'ստիպուիք ձեր տնօրէնու-
 « թեան մէջ . ի՞նչու հիմակուրնէ ձեր գործին
 « միջամտենք սա՛ կամ նա՛ կերպը ցուցնելով .
 « թերևս մեր հրահանգին բնու շարտի կարօտիք :
 « Ատենապետ փառային ներկայացուցած
 « քուէի բառերուն վրայ զխոսողութիւն մը չըլ-
 « լալով , նոյնութեամբ քուէի դրուեցաւ , և Նա-
 « խազան Սրբազանին ու Մանկատարեան էֆէն-
 « տինն քուէից զէ՛մ ընդհանուր հաւանութեամբ
 « ընդունուեցաւ , և խնդիրն ՈՐՈՇՈՒԵՑԱՒ յղել
 « Վարչութեան :

« Սրբազան Նախագահ . — Վայրկենական
 « հաճութիւն մ'է այս քուէի արդիւնքը , վաղը
 « դարձեալ սխտի մտածենք թէ ի՞նչ պէտք է ընել :

« Ատենապետ փառայ . — Սրբազան Հայր ,
 « Սահմանադրական օրէնք մէջ գործերն ուրիշ
 « կերպով չեն տնօրինուիր , Ազգ. ժողովն իւր
 « վճիռը կուտայ . Վարչութեան անկէ անոր
 « գործադրութիւնն ընել . մեր ըրածը վայրկե-
 « նական հաճոյք որոնել չէ , այլ սրտառարու-
 « թիւննիս կատարել . մեր մերը կատարեցինք ,
 « դուք ալ կ'ընտար անշուշտ ձերը կատարել .
 « մեր ձեզ ցոյց տուինք ի՞նչ որ կարող էինք
 « իրք ուղեցոյց , այն է եկեղեցական օրէնք , աղ-
 « զային դարաւոր աւանդութիւնք և աղգային
 « Սահմանադրութիւն , եթէ ասոնք չբաւեն ձեզ
 « ի տնօրէնութիւն խնդրոյն , սրտառատ եմք
 « Ազգ. ժողովին պատշաճ ամեն կերպ օջակ-
 « ցութիւն ձեզ նուիրել . բայց խնդիրը դուք պի-
 « տի տնօրինէք . վասն զի ժողովը ձեզ կ'յանձնէ
 « զայն իրք գաւառական վարչական մասնաւոր
 « դործ » : (Եւ յաւելցուց) Հիմա առանց կրից
 « և առանց յուզման խնդիրն ամփոփենք . խնդի-
 « րն աստ կ'կայանայ որ թէ և ամենուս սրտին
 « մէջ սա զգացումը կայ թէ Մկրտիչ Կաթողիկո-
 « կոսին առաջարկութիւններն անընդունելի են .
 « սակայն՝ տեսա՛ք առեկողութեան ընթերցմամբ
 « որ գանձեր քննած և վճառ չենք , միայն չա-
 « վերը ցոյց տուած ենք Վարչութեան , որ ա-
 « նոնցմով զանոնք քննէ , և խնդիրն ամբողջապէս
 « իրեն յանձնած ենք : Վարչութիւնը Մկրտիչ
 « Կաթողիկոսին առաջարկութիւններն Ազգային

« ժողովն մերժուած են ըսելով՝ հրաժարականն
 « ընդունելը ընդունելու է : Սրբազան Պատրիարքը
 « կ'արցնէ նախ՝ թէ Մկրտիչ Կաթողիկոսի ա-
 « ռաջարկութիւններն անդառնալի կերպիւ մերժը-
 « ւած են , և երկրորդ՝ թէ զխոսողութիւն ունի՞ր
 « Վարչութեան որոշման վրայ : Մեր յանձ-
 « նախումբին բերած տեղեկագիրը Սրբազան Հօր
 « հարցման առաջին կէտին՝ այն է Մկրտիչ Կա-
 « թողիկոսի առաջարկութեանց մասին , անուղ-
 « զակի կերպով կ'առատարանէ թէ այո՛ , Ազգա-
 « յին ժողովն մերժուած են . այս սխալ է . խոյ
 « երկրորդ կէտին՝ այն է Վարչութեան որոշման
 « համար այ՛ զխոսողութիւն մը կ'ընէ գործադրա-
 « կան սրահատութիւն մը յայտնելով :

« Սրբ. թէ որ ժողովը կը հաճի , վիճարանու-
 « թեան վերջ տալով՝ այս երկուս կէտերը քուէի
 « զնենք . նախ՝ Վկրտիչ Կաթողիկոսի և առա-
 « ջարկութիւնները՝ որ ժողովոյս է . նախն ներ-
 « կայացեալ Վարչութեան Խառն ժողովոյ տեղե-
 « կազրին մէջ ամփոփեալ են , մի առ մի կարգա-
 « լով բուարկենք և վճիռնիս արտասանենք . յե-
 « տոյ՝ Մկրտիչ Կաթողիկոսի հրաժարականին
 « վարչութեան ընդունուելու ն նկատմամբ յանձ-
 « նաժողովոյ բերած զխոսողութեան կէտն ալ քը-
 « լէի զնենք և վերջացնենք :

« ԵԱԶՊԱԶԵԱՆ Ն . ԷՖ . — Խօսք կուզեմ .
 « խնդիրն ի սկզբանէ վերջացած է և նորէն քըն-
 « նութեան մտնել կառաջարկուի . այս կէտին հա-
 « մար խօսելիք ունիմ :

(Պալկներ , և քուէ , քուէ , արարակող բա-
 « զուս ձայներ :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Չեմ կրնար խօսք
 « տալ առանց ժողովին հարցնելու թէ կուզե՞ք ար-
 « տունութիւն տալ ձեզ զխոսողութիւննիդ ընելու :

« Զայս ըսելով Ատենապետ փառայ քուէի
 « դրու , և ժողովը միաձայնութեամբ ՄԵՐԺԵՑ
 « Երազեան էֆէնտի խնդրած արտունութիւնը :

« Յետոյ քուէի դրու նաև Մկրտիչ Կաթողի-
 « կոսի և առաջարկութիւնները մի առ մի , հետե-
 « լեալ կարգաւ :

1⁰ Կաթողիկոսարանին Սխալն ուրիշ տեղ
 « փոխադրութիւնը :

« Ժողովն այս Ա . առաջարկութեան միաձա-
 « ժուս ՄԵՐԺՈՒՄ արտասանեց :

2⁰ Տէրութեան կողմէ ամսական մը սա-
 « ձանուղը :

« Ժողովն այս Բ . առաջարկութեան նոյն-
 « պէս ՄԵՐԺՈՒՄ արտասանեց :

3⁰ Սոյ վիճակոյ ընդարձակելը :

« Ժողովն այս Գ . առաջարկութեան նոյն-
 « պէս ՄԵՐԺՈՒՄ արտասանեց :

4⁰ Կաթողիկոսութեան սրտածնին առաջ-
 « նորդութիւններէ աւելի արտոնութիւն մը տէրու-
 « թեան կողմէ արուղը :

« Ժողովն այս Դ . առաջարկութեան նոյն-
 « պէս ՄԵՐԺՈՒՄ արտասանեց :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ուրեմն Մկրտիչ
 « Կաթողիկոսի առաջարկութեանց ամենն ալ այս-
 « օր վճարար մերժուեցան ժողովս : Կը մնայ
 « Մկրտիչ Կաթողիկոսի հրաժարականին Վարչու-
 « թեան Խառն ժողովն ընդունուած բլլալու կէ-
 « տըն , որոյ մասին Ս . Հայրը կը հարցնէ թէ
 « ժողովը զխոսողութիւն ունի՞ :

« ԶԱՅՆԵՐ . — Այո՛ , յանձնաժողովը զի-
 « տողութիւն կ'ընէ թէ կաթողիկոսին հարցնելու
 « է որ իւր առաջարկութիւններն ետ կ'առնու
 « արդեօք :

« ԱՊՐՈ Ս . ԷՖ . — Պէտք է այս հարցումն
 « ըլլայ Մկրտիչ Կաթողիկոսին . քանզի կը կա-
 « կածիմ որ այս մարդը կուսակցութիւն մը կող-
 « մէ . ուստի տարից սրտածնական ձև մ'է որ
 « կատարուելու է , ծանուցանելով որ Ազգ . ժո-
 « ղովն իւր առաջարկութեանց ամենն ալ մեր-
 « ժած է . եթէ ինք դարձեալ պնդէ իւր առա-
 « ջարկութեանց վրայ , այն տտեն պաշտօնէն ին-
 « կած համարուելու է :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Երկու առաջարկու-
 « թիւն կայ . մէկն Ապրո կ'էֆէնտիին է :

« Տ . ՄԱՏԹԷՈՍ ՎՐԿ . — (Տեղեկարեր) Անկէ
 « յառաջ յանձնաժողովն ըրած է սոյդ առաջար-
 « կութիւնը . ինչու՞ ուրիշին կը վերաբերէր :

« Տ . ԽՈՐԷՆ ՍՐՔԶՆ . — Խօսք ուզած եմ
 « զխառնէն , բայց չարուեցաւ . առաջարկութիւն-
 « ներէն առաջ խօսելու կարգն իմն է , պէտք է
 « որ խօսիմ :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Խօսէն Սրբազան

« խօսք կուզէ թէ որ տամ , շատ կարելի է որ
 « իւր ետեկն ուրիշներ ալ խօսիլ պիտի ուզեն ,
 « և նոր վիճարանութիւն պիտի բացուի : Ժողովը
 « կը հաճի՞ վիճարանութիւնը շարունակել . նախ
 « այս որոշուի , և յետոյ Խօսքն սրբազանին խօսք
 « կուտանք :

« Անմիջապէս քուէի դրուելով , Ժողովը մի-
 « աձայնութեամբ ՎՃՈՒԵՑ վիճարանութիւնը փո-
 « կել , և առաջարկութեանց քուէարկութեանն
 « անցնել :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ուրեմն քուէարկու-
 « թիւն պիտի ընենք . երկու առաջարկութիւն կոյ
 « ըսի , մէկն է՝ Մկրտիչ Կաթողիկոսին հարցնել
 « վարչութեան ձևօք թէ իւր առաջարկութիւն-
 « ներն՝ որք մերժուած են Ազգային ժողովն ,
 « կուզե՞ք ետ առնուլ և շարունակել իւր սրտածնու-
 « և եթէ պնդէ իւր առաջարկութեանց վրայ , այ-
 « նուհետև հրաժարականն ընդունուած համարիլ :
 « Խոյ թէ որ ետ առնու , վարչութեան կը մնայ՝
 « պարտաւարտաճը տնօրինել :

« ԱՂԱԲԷՎԵԱՆ Ս . ԷՖ . — Բայց Վեհա-
 « փառ Կաթողիկոսէն եկած վերջին կոնգակին
 « մէջ սրտան մը կայ , հարկու Մկրտիչ Կաթող-
 « զիկոսին այն ալ ընդունել սխտի արուղի , եթէ իւր
 « պաշտօնը շարունակել յանձնառու լինի :

« ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Վեհափառ Հայրա-
 « պետին խօսքերը մեզի համար մէյմէկ զճիւ կեն ,
 « սակայն այն կոնգակին՝ որ վերջերս եկած է առ
 « Սրբազան Պատրիարքն , Ազգային ժողովոյս ա-
 « տենին մէջ խնդիր եղած չէ տակաւին , և ա-
 « նոր գործադրութեան պարագային վրայ որոշում
 « մը չէ արտասանուած , ինչպէ՞ս կարելի է զայն
 « այժմէն վարչութեան յանձնել ՚ի գործադրու-
 « թիւն . մի՞ զուցէ անտիտունելի դժուարութեանց
 « հանդիպինք և սուրբայ շիթութեանց տեղի
 « տանք : Նոն ըստ որում նոյն կոնգակը Սոյ
 « միանգամայն և Աղթամարոյ կաթողիկոսու-
 « թեանց կը պատկանի , ժողովոյն պէտք է ժամա-
 « նակին անոր վրայ լրջութեամբ խորհուրդ ընել ,
 « ակոսոց յարարութեանց կանոնները սահմա-
 « նել , և Վեհափառին կոնգակին գործադրութիւ-
 « նը սուրբայ շիթութիւններէ ապահովելն ե-
 « տն , պէտք եղածը զմեզ և հրաւիրել վարչու-

թիւնն ըստ այնմ վարուիլ Սոց և Աղթամարայ կաթուղիկոսաց հետ: Հիմակոբնէ անապարանոր գործի ձեռնարկել խոհեմութիւն չէ, կարծեմ:

Սոյն խորհրդածութեան վրայ գիտողութիւն ընող չըլլալով, Ստենապետ փաշան յանձնաժողովոյ տեղեկագրին եզրակացութիւնը կարգաց և յայտնեց թէ քուէի դրուելը առաջարկութեան մէկը սա է:


«Վարչութիւնը Սոց Մկրտիչ կաթուղի- կոսին ծանուցանէ՝ Աղգային ժողովոյ իւր առաջարկութեանց նկատմամբ տուած որոշումը, « յայտնելով, որ եթէ իւր առաջարկութեանց « վրայ պնդէ, հրաժարականն ընդունուած պիտի համարուի, և այն ատեն հարկ եղածը « պիտի տնօրինուի վարչութեան կողմէն »:

Իսկ երկրորդ առաջարկութիւնն է առաջնոյն հակառակ՝ միջամտութիւն չընել վարչութեան գործին, այսինքն՝ Մկրտիչ կաթուղիկոսի առաջարկութիւններն Աղգային ժողովէն վճարար մերժուելէ ետեւ, ձգել վարչութեան, որ անոր հրաժարականն ընդունելու կամ չընդունելու գործն ինքնին տնօրինէ:

Հետեւապէս այս երկու առաջարկութիւնները մի գինի միոյ քուէի դրուեցան, և առաջին առաջարկութիւնն ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱԻ 26 բԸ- ուէով ընդդէմ 23 ի:

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն ժողովին սոյն որոշման համեմատ Վարչութիւնը կալարտաւորի Սոց Մկրտիչ կաթուղիկոսին ծանուցանել իւր առաջարկութեանց նկատմամբ Աղգային ժողովոյ տուած վճիռը, միանգամայն յայտնել որ եթէ իւր առաջարկութեանց վրայ պըն-

դէ, հրաժարականն ընդունուած պիտի համարուի և այն ատեն պէտք եղածը պիտի տնօրինուի Վարչութեան կողմանէ:




Ստեանը գոյուելու միջոցին Ստենապետ փաշան ծանոյց ժողովին որ Աղթամարայ խնդրոյն վրայ Յանձնաժողովը գրութեամբ մը կիմացընէ թէ իւր մէջ համաձայնութիւն չէ կրցեր գոյացնել, և թէ խնդրոյն փախկութեանը համար կառաջարկեն որ սոյն խնդրոյ միճարանութիւնն դրօք փակելովը կատարուի:

Հետեւապէս Ստենապետ փաշան՝ յիշեալ խնդիրը դանփակի մէջ նկատողութեան առնուելու պայմանաւ յաջորդ նստին օրակարգին անցընելու համար ժողովին հաճութիւնն ստանալէ ետեւ, յայտարարեց թէ յաջորդ նիստը 8 օրէն պիտի գումարի յառաջիկայ ուրբաթ օր, ըստ յետագայ Օրակարգի:

Ա. Խնդիր սրտորիտրբարկան սրտասխանատուութեան վսան գործադրութեան որոշմանց Աղգային Վարչութեան:

Բ. Կրկին տեղեկագիրը խորհրդարանական Խառն Յանձնաժողովոյ ի վերայ խնդրոյն Աղթամարայ [Պոնկիակ]:

Ստեանը գոյուեցաւ ժամ 10 ին:
ԱՏԵՆԱԳԻՐ ԱՏԵՆԱԳԵՏ
Հ. Ս. ԱՂԱՃԱՃԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ



Ահաւասիկ Ս. Պատրիարք Հօր կողմէն Աղթամարայ խնդրոյն վերաբերեալ հարցման վրայ՝ Աղգ. ժողովոյ Յանձնախմբի մեծամասնութեան և փոքրամասնութեան կողմէ ներկայացեալ Տեղեկագրոց օրինակը:

Ա.

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՆԳՍՏՈՅ

ՏԵՂԵԿԱԳՐԻ

Վսեմափայլ Ստենապետ Փաշա Աղգ. ժողովոյ:

Յանձնաժողովը չկարենալով իւր մէջ համաձայնութիւն գոյացնել՝ Աղթամարայ խնդրոյն վրայ Ս. Պատրիարք Հօր առ Աղգ. ժողովը ուղղած հարցման նկատմամբ արուելիք պատասխանին մասին, մեծագոյն մասը կը փութայ ներկայիս իւր կարծիքը յայտնել:

Ահաւասիկ Ս. Պատրիարք Հօր հարցումը. «Աղթամարայ Խաչատուր սրբազանի՝ իւր ճանիտրդին սպանման ոճրագործութեան մասնակցութեանն արգարանալու և անպարտահամարուելու բաւական կը համարե՞ ժողովը «Բ. Պոնէն եկած թէղթերէն»:

«Այս հարցման պատասխանը միայն կարող կընէ զիս գործադրել կամ ոչ՝ Համապարտ և Խառն ժողովոյ որոշումներն»:

ՊԱՏԱՍԻԱՆ

Բաւական չէ:
— Ընդհանուր տեսութեամբ քաղաքական օրէնքները եղեանական գործերու վրայ երեք տեսակ վճիռ կենթադրեն:

Առաջինն է՝ լոկ դատաստարտութիւն յանցաւորին, որ բնականաբար հիմնեալ է ամբաստանելոյն ոճրագործութեան մասին դատաւորին օրինաւորապէս ստացած համոզմանը վրայ:

Երկրորդն է՝ ամբաստանելոյն բացարձակ անմեղութեան և անպարտութեան վճիռը, զոր գատաւորը կարճակէ այն ատեն միայն՝ երբ ամբաստանելոյն վրայ յարուցուած կասկածները ըստ օրինաց բննելէ ու կշռել վերջը խզի մըտօք կը համոզուի անոր անպարտութեանը, հե-

տեարար և զանի անմեղ կը հռչակէ, այս տեսակ վճիռ մը ամբաստանելոյն պատիւն անգամ կը վերահաստատէ՝ զանի ամեն կասկածանաց արատէն մարբելով:

Իսկ երրորդ տեսակն է սոյն վճիռը, որ կը տրուի այն պարագային մէջ, ուր ամբաստանութեան մասին յառաջ բերուած կասկածք ու իրողութիւնը չկարենալով որոշակի և ըստ օրինի ոչ հաստատուիլ և ոչ ցրիլ, գործն անստուգութեան մէջ կը մնայ. և ըստ որում օրէնքը լոկ կասկածանոց վրայ պատիժ չարամաղկէր, ամբաստանեալը անպատիժ կը թողուի. բայց այս տեսակ վճիռ մը անմեղութեան չենթադրելէ զատ, կրնայ մինչև անգամ ապագային մէջ նոր դատական հետազոտութեանց տեղի տալ, եթէ նոր փաստ մը, իր մը հին կասկածանաց ոյժ տան:

Այդ Բ. Պրան թէղթերէնի սրտանակութիւնը ըստ մեր կարծեաց վերջին դատարարութեան կը սրտասխանէ:

Բ. Պոսք՝ իրր գերագոյն հեղինակութիւն երկրին՝ կը յայտարարէ միմիայն թէ անկարելի եղած է իրեն՝ Խաչատուր եպիսկոպոսի դատը յառաջ տանիլ, պատճառելով՝ Շահին և Եռսուֆ անուն երկու բխրաւորուն փախուստն ու մահը. հետեւորար անմեղութեան վճիռ չտար: Այս վերջին մասին տնօրէնութիւնն ալ բացօրոշապէս ազգին կը յանձնէ:

Այժմ կը մնայ զիտնալ թէ ազգը իր այս պաշտօնն ալ կատարած է:

Յանձնաժողովոյ մեծագոյն մասը նկատելով որ իրեն ներկայացեալ գրութիւնը այս կէտին վրայ բնաւ լոյս չեն մատակարարեր, կառաջարկէ որ Պատկառելի ժողովը հարցնէ Ս.

Պատրիարք Հօր, թէ խաչատուր սրբազանի կաթողիկոսութեան կրօնական մասը լուծելէ յառաջ կանոնաւոր վճարով անոր անձը քաղաքականապէս անվեղ ու անպարտ հաշակելու համար օրինաց պահանջումները վարչութեան կողմանէ գործադրուած են թէ ոչ. — եթէ ոչ՝ այս մասին օրինական թերութիւնները հարկ է լրացնել :

Ա. ԱԼԹՈՒՆ ՏԻՐԻՐԻ ՍԱՐԳԻՍ ԱՂԱՐԷԿԵԱՆ

Յ. ՆՈՒՐԵԱՆ

Կ. Պօլիս 12 մարտ 1876

Բ.

ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ ԵՐԿՈՒ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԱՆԴՍՄՈՅ

ՅԵՂԵԿԱԳՐԲ

Վսեմապատիւ Առնապետ Փաշա

Ազգային ժողովոյ

Ազգաժողովոյ կաթողիկոսական խնդրոյն պրայ Առնապատիւ Սրբազան Պատրիարք Հօր վեարկար 20 թուականու առ Ազգային ժողով մատուցած հարցման տեղեկագիրը և այդ խընդրոյն փերտերեալ ըտր անցեալ գործողութիւններն ուղղութեան առնելով Յանձնաժողովոյ անդա՛քս, տեսանք որ Ազգաժողովոյ կրօնական խնդիրը երկու մաս ունեցած է, Եկեղեցական և Քաղաքական :

Եկեղեցական մասին խաչատուր կաթողիկոսի ընտրութիւնն և օծումը յետ ընդ երկար քննութեան ընդունելի վճար է Եկեղեցական Համագումար ժողովն 'ի 1874 մարտ 11. րոյց ըստ որում քաղաքական մասին այն է Պետրոս կաթողիկոսի սպանութեան խնդրոյն մէջ Բ. Գրան զխաչատուր կաթողիկոս կասկածելի համարելուն կամ չհամարելուն խնդիրը մնացած ըլլալով՝ սոյն խնդիրն Ազգային ժողովոյ ատեանն ելած է, և ըստ այնմ Ազգային ժողովն ալ իրրե թեմական խնդիր վարչութեան խառն ժողովոյ յղած է 'ի անօրէնութիւն :

նութիւնը խնդրոյն վերջնական լուծումն ըլլալը սրտէր է :

Խնդիրն այս վիճակին մէջ եկած է Ազգային ժողովոյ ատեանը 'ի 1874 դեկտեմբեր 6, որ սոյն խնդրոյն քաղաքական մասին քննութիւնը և խնդիրն ամբողջապէս իրրե թեմական խնդիր յղեր է վարչութեան խառն ժողովոյ 'ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն :

Ազգային վարչութեան խառն ժողովը նկատելով որ այս խնդրոյն քաղաքական մասին այն է սպանութեան խնդրոյն վրայ Բ. Գրան կասկածանքը մնացած է միայն, որով կարեւոր ունի խնդրոյն վերջնական լուծումը, 1874 ապրիլ 5 թուականու թագրիր գրեր է առ Բ. Գրան թէ խաչատուր Սրբազան իւր նախորդին սպանութեան ոճրոյն մէջ ընդ կասկածանօք է տակաւին թէ ոչ : Եւ նոյն տարւոյ յուլիս 26 թուականու եկած Բ. Գրան պատասխանազիրն այդ խնդրոյն վրայ խաչատուր կաթողիկոսի մասին ըսելիք մը չունենալը յայտնէր է : Այս պատասխանին վրայ Քաղաքական ժողովն ատեանին և կրօնական ժողովն ալ Եկեղեցական Համագումար ժողովոյ նորոգ վճարով անպարտ հրատարակած են զխաչատուր կաթողիկոս՝ Բ. Գրան յարուցած կասկածանքին :

Արդ՝ Յանձնաժողովոյ ստորագրեալ անգամբըս նկատելով թէ՛

1. Ըստ որում Ազգաժողովոյ խաչատուր կաթողիկոսի ընտրութեան և օծման ընդունելի ըլլալը Եկեղեցական Համագումար ժողովով վճարուելն յետոյ՝ Պետրոս կաթողիկոսի սպանութեան պարագային մէջ Բ. Գրան զխաչատուր կաթողիկոս կասկածելի համարելուն կամ չհամարելուն խնդիրը մնացած ըլլալով՝ սոյն խնդիրն Ազգային ժողովոյ ատեանն ելած է, և ըստ այնմ Ազգային ժողովն ալ իրրե թեմական խնդիր վարչութեան խառն ժողովոյ յղած է 'ի անօրէնութիւն :


2. Ըստ որում վարչութեան խառն ժողովը վերջին անգամ Բ. Գրան զիսկելով՝ անկէ պատասխան ստացած է թէ խաչատուր կաթողիկոսի համար ըսելիք մը չունի Բ. Գրան, և ըստ այնմ խառն ժողովն, ինչպէս նաև Եկեղեցական Համագումար ժողովն իր նախորդ վերջին լրացնելով՝ զխաչատուր կաթողիկոս անպարտ հրատարակած են Բ. Գրան յարուցած կասկածանքին :

զեցական Համագումար ժողովն իր նախորդ վերջին լրացնելով՝ զխաչատուր կաթողիկոս անպարտ հրատարակած են Բ. Գրան յարուցած կասկածանքին :

3. Ըստ որում կրօնական ժողովն ըստ առաջարկութեան Եկեղեցական Համագումար ժողովոյ և Հայրապետական վերջին կոնգակին, առ Մայր Աթոռն Ս. Էջմիածնի և առ Գաջապալ նորին հոգևոր հպատակութեան սոյմանազիրն առած է խաչատուր կաթողիկոսն, և որուն (խաչատուր կաթողիկոսի) ստորագրութիւնը վաւերացուցած է Առնապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը իւր իսկ ստորագրութեամբն ու կնքով :

Յանձնաժողովոյ ստորագրեալ անգամբ կեղրակացներ թէ Ս. Առնապատիւ Սրբազան Պատրիարք Հօր կը մնայ վարչութեան և Եկեղեցական Համագումար ժողովոյ որոշումը գործադրել ըստ պահանջման Սահմանագրութեան :

12 Մարտ 1876 Անդամք Յանձնաժողովոյ
Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
ՍԱՀԱԿ *ՆՆՅ Տ. ՍԱՐԳՍԵԱՆ



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորհն	Այրեպիտի.	Նոր-պէյ	ԱՅՆԱԳՅԷ
2. Տ. Կարապետ	Եպիտի.	Սերբեան	
3. Տ. Ներսէս	Վ.	Արմենեան	ԱՅՆԱԳՅԷ
4. Տ. Ա. Երասիմ	»	Ռաբինեանց	
5. Տ. Գէորգ	»	Գերմանեան	
6. Տ. Զարարիա	»	Զիմրիսիճեան	
7. Տ. Խորհն	»	Կիրոյեան	
8. Տ. Յովհաննէս	»	Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրեան	
10. Տ. Գրիգոր	»	Երամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճառեան	
12. Տ. Երեմիա	»	Խաղիւզի	
13. Տ. Սիրիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վարդանէս	»	Միջոցիւղի	

ԲՍՆԱԲՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մարտառեան	պէյ	ԱՅՆԱԳՅԷ
2. Միրոյշ	Մամիկոնեան	Էջմիշեան	ԱՅՆԱԳՅԷ
3. Արթուր	Հարենց	»	
4. Աստիա	Իկոնոպոլեան	»	
5. Խաչիկ	Ալեանաբեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Լասեան	»	
8. Յովնաթ	Կաստանդ	»	
9. Յովնաթ	Փափաղեան	»	
10. Յարգիս	Արթուրեան	»	
11. Յարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միրոյշեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1	Հայկական	Գրական	1870
2	Հայկական	Գրական	1871
3	Հայկական	Գրական	1872
4	Հայկական	Գրական	1873
5	Հայկական	Գրական	1874
6	Հայկական	Գրական	1875
7	Հայկական	Գրական	1876
8	Հայկական	Գրական	1877
9	Հայկական	Գրական	1878
10	Հայկական	Գրական	1879
11	Հայկական	Գրական	1880
12	Հայկական	Գրական	1881
13	Հայկական	Գրական	1882
14	Հայկական	Գրական	1883
15	Հայկական	Գրական	1884
16	Հայկական	Գրական	1885
17	Հայկական	Գրական	1886
18	Հայկական	Գրական	1887
19	Հայկական	Գրական	1888
20	Հայկական	Գրական	1889
21	Հայկական	Գրական	1890
22	Հայկական	Գրական	1891
23	Հայկական	Գրական	1892
24	Հայկական	Գրական	1893
25	Հայկական	Գրական	1894
26	Հայկական	Գրական	1895
27	Հայկական	Գրական	1896
28	Հայկական	Գրական	1897
29	Հայկական	Գրական	1898
30	Հայկական	Գրական	1899
31	Հայկական	Գրական	1900

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓՈՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ ՄԱՒՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի . և Ղալախիոյ Ս. Լուսաւորիչ Նկեղեցւոյ բանկայը . և Հայ գրաւթճանայ քով .

Հայկական	Գրական	1870
Հայկական	Գրական	1871
Հայկական	Գրական	1872
Հայկական	Գրական	1873
Հայկական	Գրական	1874
Հայկական	Գրական	1875
Հայկական	Գրական	1876
Հայկական	Գրական	1877
Հայկական	Գրական	1878
Հայկական	Գրական	1879
Հայկական	Գրական	1880
Հայկական	Գրական	1881
Հայկական	Գրական	1882
Հայկական	Գրական	1883
Հայկական	Գրական	1884
Հայկական	Գրական	1885
Հայկական	Գրական	1886
Հայկական	Գրական	1887
Հայկական	Գրական	1888
Հայկական	Գրական	1889
Հայկական	Գրական	1890
Հայկական	Գրական	1891
Հայկական	Գրական	1892
Հայկական	Գրական	1893
Հայկական	Գրական	1894
Հայկական	Գրական	1895
Հայկական	Գրական	1896
Հայկական	Գրական	1897
Հայկական	Գրական	1898
Հայկական	Գրական	1899
Հայկական	Գրական	1900